ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար <<ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ-26/28 >> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի
Գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ <<27>> մարտ 2026 թ. ժ.10.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Արա Ստեփանյան - աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Անդամներ

Քաջիկ Վարդանյան -աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետ

Վարդան Վարդանյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման , տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի առաջատար մասնագետ

Հայկ Գուլաբյան - աշխատակազմի կոմունալ տնտեսության, գույքի կառավարման , տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի առաջատար մասնագետ

Ջոն Վարդանյան - աշխատակազմի քարտուղարության ,անձնակազմի կառավարման , տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի երկրորդ կարգի մասնագետ

Հանձնաժողովի քարտուղար

Մարիամ Գեղամյան- աշխատակազմի գնումների բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին
2. Տեղեկություններ շտկված հայտերի գնահատման մասին

1.Տեղեկություն գնահատող հանձնաժողովի իրավազոր համարվելու մասին

1.1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանձնաժողովը բաղկացած է հինգ անդամից և հանձնաժողովի նիստին մասնակցում են հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար, Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017թվականի թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն, հանձնաժողովի նիստը համարել իրավազոր և հայտարարել բացված:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2.Տեղեկություններ շտկված հայտերի գնահատման մասին

25 մարտ 2026 թվականին հայտում ներկայացված էլեկտրոնային փոստերի և armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ծանուցվել է մասնակիցներին ներկայացնելով

հայտում առկա հրավերի պահանջների նկատմամբ առկա անհամապատասխանությունների մասին և առաջարկվել է 1 աշխատանքային օրվա ընթացքում մինչև գնահատող նիստի կասեցման ավարտը շտկել հայտով առկա անհամապատասխանությունները:

2.1 Հիպերնովա ՍՊԸ-ն պատշաճ և ժամանակին շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

2.2 Արհովշին ՍՊԸ-ն պատշաճ և ժամանակին շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

2.3 Էն Շին ՍՊԸ-ն պատշաճ և ժամանակին շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

2.4 Եվրոբուդ պլյուս ՍՊԸ-ն պատշաճ և ժամանակին շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

2.5 Մասշտաբ ՍՊԸ, Շին Մագիստրալ ՍՊԸ, Յան Բիլդինգ ՍՊԸ ՀԳ- ն պատշաճ և ժամանակին շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

2.6 Քանքարշին ՍՊԸ-ն պատշաճ և ժամանակին շտկել է հայտում առկա անհամապատասխանությունները:

2.7 Բերմա ՓԲԸ-ն չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները :

Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենիք 34-րդ հոդվածի 1-ին կետով և նույն կետի երկրորդ նախադասության առաջին պարբերությամբ Վասպորականի ՃՇՇ ՍՊԸ -ի ներկայացրած հայտը գնահատել հրավերի պահանջներին բավարար:
2. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենիք 34-րդ հոդվածի 1-ին կետով և նույն կետի երկրորդ նախադասության առաջին պարբերությամբ ՎՄՎ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ -ի ներկայացրած հայտը գնահատել հրավերի պահանջներին բավարար:
3. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենիք 34-րդ հոդվածի 1-ին կետով և նույն կետի երկրորդ նախադասության առաջին պարբերությամբ Նատալի Շին ՍՊԸ և Արտ Պլաս ՍՊԸ ՀԳ -ի ներկայացրած հայտը գնահատել հրավերի պահանջներին բավարար:

4. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենիք 34-րդ հոդվածի 1-ին կետով և նույն կետի երկրորդ նախադասության առաջին պարբերությամբ Կապավոր ՍՊԸ -ի ներկայացրած հայտը գնահատել հրավերի պահանջներին բավարար:

5. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Արհովշին ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար:

6. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Հիպերնովա ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար:

7. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Էն Շին ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար:

8. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Եվրոբուդ Պլյուս ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

9. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Քանքարշին ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար:

10. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Մասշտաբ ՍՊԸ, Շին Մագիստրալ ՍՊԸ և Յան Բիլդինգ ՍՊԸ ՀԳ -ի հայտը գնահատել բավարար:

11. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 04 մայիս 2017թ 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն Բերմա ՓԲԸ հայտը թիվ 2 , 3 , 8 չափաբաժիններով գնահատել անբավարար և մերժել:

12. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետը, հրավերի 1-ին մասի 8.14 կետը , հիմք ընդունելով Բերմա ՓԲ ընկերության.կողմից չշտկված հայտը , նշված հիմքով մասնակցի՝ Բերմա

ՓԲԸ-ի կողմից նշված հանգամանքը համարել որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում:

13. Ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ ենթակետը, հրավերի 1-ին մասի 7.3-րդ կետի 2-րդ ենթակետը , 7.5 կետը, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության թիվ 12 որոշումը դիմել Էվոկաբանկ ԲԲԸ-ին հինգ աշխատանքային օրվա ընթացքում վճարելու Արտաշատի համայնքապետարանի 900415151472 հաշվեհամարին 2026 թվականի մարտի 16-ի թողարկված N 720/27 , N 721/27 722/27 բանկային երաշխիքները՝ հայտի ապահովման վճարները:

14. **Քանի որ ի հայտ են եկել Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա . ենթակետի հանգամանքներ ապա գնահատող հանձնաժողովի նիստ գումարել հայտի ապահովման վճարի ստացման և կամ հրաժարվելու հիմքերը ի հայտ գալուն հաջորդող աշխատանքային օրը:**

15. Քանի որ թիվ 8 չափաբաժնով մասնակիցներ՝ Հիպերնովա ՍՊԸ և Վասպուրականի ՃՇՇ ՍՊԸ ներկայացված նվազագույն գնային առաջարկները հավասար են,ղեկավարվելով Գնումների մասին օրենքի 38-րդ հոդվածով, հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8,6 կետը, ՀՀ կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին որոշելու նպատակով իրականացնել թիվ 8 չափաբաժնով բանակցություններ:

2.Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականիթիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ, հիմք ընդունելով հրավերի 1-ին մասի 8,6 կետի բ) պարբերությունը՝ բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվությունը սահմանել ըստ աղյուսակ 1-ի:

16. Աղյուսակ թիվ 1

Հ/Հ	Վարման օր	Ժամը	վայր
1	01.04.2026թ	10:00	Ք. Արտաշատ, Օգոստոսի 23/62, Արտաշատի համայնքապետարան, 9-րդ հարկ նիստերի դահլիճ

3. Բանակցությունների վարման ժամկետ սահմանել 10 որպե, բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը:

15. ԱՄԱՀ-ԲՄԱԾՁԲ-26/28 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող նիստը հրավիրել 2026 թվականի ապրիլի 01-ին ժամը 10.00-ին Արտաշատի համայնքապետարան նիստերի դահլիճ:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ---------- Արա Ստեփանյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ ---------- Քաջիկ Վարդանյան

---------- Վարդան Վարդանյան

---------- Հայկ Գուլաբյան

---------- Ջոն Վարդանյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Մարիամ Գեղամյան